




«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«27» դեկտեմբերի 2014թ.

Հաստատում եմ

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետի ժամանակավոր պաշտոնակատար

 **Լ. Թունյան**

ԳԲԽ-46/14 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Էյ Էմ Էյժ Աուդիտ» ՓԲԸ-ի 20.12.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

**1. «Էյ Էմ Էյժ Աուդիտ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները
և պահանջը**

«Էյ-Էմ-Էյժ Աուդիտ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից «ԷԿԵՆԳ-ՊԸԾՁԲ-14/2»

ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Էյ-Էմ-Էյժ Աուդիտ» և «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲ ընկերությունները: Ընկերությունը 2014թ. աուդիտի ծառայության համար առաջարկել է 1,378,944 ՀՀ դրամ, իսկ 2015թ. համար՝ 1,496,880 ՀՀ դրամ: «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ն 2014թ. և 2015թ. աուդիտի ծառայության՝ յուրաքանչյուր տարվա համար, առաջարկել է 6,000,000 ՀՀ դրամ: Պատվիրատուն Ընթացակարգը հայտարարել է չկայացած՝ ներկայացված հայտերը հրավերի պայմաններին չհամապատասխանելու պատճառաբանությամբ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2014թ. դեկտեմբերի 12-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի 1-ին ենթակետի 1-ին պարբերությունում նշվել է. ««Էյ-Էմ-Էյժ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերին հետևյալ պատճառաբանությամբ. մասնակիցը չունի «մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» որակավորման չափանիշ հետևյալ պատճառաբանությամբ: Սույն ընթացակարգով, հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջները, գնման առարկա է հանդիսացել «ԷԿԵՆԳ»-ին աուդիտորական ծառայության մատուցումը: Տվյալ պարագայում մասնակիցը չի իրականացրել գնման առարկա հանդիսացող ծառայությունների մատուցում, ինչպես նաև գնման առարկային համանման ծառայություններ: Քննարկվող դեպքում մասնակիցը երբևէ չի իրականացրել կապի, հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների որոլտում հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի անցկացում»:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 81-րդ կետի համաձայն՝ մասնակիցների «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ

պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե՝

ա. մինչև երեք հարյուր հիսուն միլիոն դրամ նախահաշվային արժեք ունեցող գնումների դեպքում, դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից,

2) առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի (կամ պայմանագրերի) կողմերի հաստատած՝ պայմանագրի (կամ պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի (կամ պայմանագրերի) կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

«ԷԿԵՆԳ-ՊԸԾԶԲ-14/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 1-ին մասի 2.3 կետով սահմանվել է, որ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.2), որ հայտը ներկայացնելու օրվան նախորդող տաս տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն քսան պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում կատարվող գնումների ծավալի ոչ պակաս, քան հիսուն տոկոսից: Նմանատիպ են համարվում կապի, հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի անցկացումը:

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

3) մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:

Կարգի 85-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Շինարարական ծրագրերի դեպքում տնտեսական գործունեության նույն խմբերը սահմանվում են՝ հաշվի առնելով քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները՝ ըստ ոլորտների: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

«Էյ-Էմ-Էյ» Աուդիտ» ՓԲԸ-ն գտնում է, որ Հրավերի 1-ին մասի 2.3 կետով մասնակցի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը գնահատելու նպատակով նախատեսված սահմանման կիրառումը Պատվիրատուի կողմից հակասում է Կարգի 81-րդ կետի 1-ին ենթակետով և 85-րդ կետով սահմանված պահանջներին, ինչպես նաև սահմանափակում է մրցակցությունը, իսկ «Էյ-Էմ-Էյ» Աուդիտ» ՓԲԸ-ի հայտով այդ չափանիշի գնահատման համար ներկայացված

տեղեկատվությունը և փաստաթղթերը համապատասխանում են Կարգի և Օրենքի պահանջներին:

Ընկերությունը պահանջել է, որ Պատվիրատուն հանձնաժողովի 2014թ. դեկտեմբերի 12-ի նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի 1-ին ենթակետի առաջին պարբերությունում նշված պատճառաբանության փոխարեն «Էյ-Էմ-Էյ Աուդիտ» ՓԲԸ-ի հայտի գնահատման համար կիրառի Կարգի և Օրենքի վերոնշյալ դրույթները:

Գնահատող հանձնաժողովի 2014թ. դեկտեմբերի 12-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի 1-ին ենթակետի երկրորդ պարբերությունում նշվել է. «Բացի վերը նշվածից, մասնակիցը չի բավարարում նաև «աշխատանքային ռեսուրսներ» չափանիշին, քանի որ պայմանագրի կատարման համար պահանջվող «աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է բավարար, եթե մասնակիցը ունի առնվազն 3 միջազգային (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) որակավորված (ներառյալ ասոցացված) և 3 Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող աուդիտորներ, որոնք պետք է ունենան նմանատիպ աշխատանքների իրականացման ոչ պակաս 5 տարվա փորձ: Տվյալ պարագայում աշխատանքների իրականացման համար մասնակցի կողմից ներգրավվելու են ընդամենը 4 աուդիտորներ, որոնցից միայն Արամ Հովհաննիսյանն ունի միջազգային որակավորում»:

Հրավերի 1-ին մասի 2.3 կետով Պատվիրատուի կողմից սահմանվել է, որ «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

3) մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջներն են՝

- առնվազն 3 միջազգային (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) որակավորված (ներառյալ ասոցացված) և 3 Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում

ունեցող աուդիտորներ, որոնք պետք է ունենան նմանատիպ աշխատանքների իրականացման ոչ պակաս 5 տարվա փորձ, ինչպես նաև աուդիտի աշխատանքներին մասնակցող խմբի ղեկավար աուդիտի որակավորման լիցենզիայի առկայությամբ, որն ունի նմանատիպ աշխատանքների ղեկավարման առնվազն 10 տարվա փորձ:

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում մասնակցի հայտը մերժվում է:

Ընկերությունը նշել է, որ Հայաստանի Հանրապետությունում աուդիտորական գործունեությունը լիցենզավորվող գործունեություն է և «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով սահմանված է, որ աուդիտորական ընկերությունը, ի թիվս այլ պահանջների, պետք է ունենա առնվազն 5 աշխատող աուդիտորներ, որպեսզի լիցենզիա ստանալու իրավունք ունենա: Նույն օրենքը սահմանում է, որ աուդիտորը աուդիտորի որակավորում ստացած ֆիզիկական անձն է, ինչպես նաև սահմանում է Հայաստանի Հանրապետությունում աուդիտորների որակավորման հիմնական դրույթները:

«Էյ-Էմ-Էյ Հաուս» ՓԲԸ-ն գտնում է, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ, 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 3-րդ և 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերը և Կարգի 84-րդ կետով սահմանված պահանջները:

Ընկերությունը պահանջել է, որ Պատվիրատուն գնահատող հանձնաժողովի 2014թ. դեկտեմբերի 12-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի 1-ին ենթակետի երկրորդ պարբերությունում նշված պատճառաբանության փոխարեն «Էյ-Էմ-Էյ Հաուս ՓԲԸ» հայտի գնահատման համար կիրառի Կարգի և Օրենքի վերոնշյալ դրույթները:

Գնահատող հանձնաժողովի 2014թ. դեկտեմբերի 12-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի 1-ին ենթակետի երրորդ պարբերությունում նշված է. «Վերոնշյալի հետ միաժամանակ չեն պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված դրույթները, ըստ որի՝ փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը»:

Հրավերի 1-ին մասի 4.3 ենթակետում նշված է, որ մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված գնման ընթացակարգին մասնակցելու

դիմում՝ մեկ բնօրինակ (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն:

«Էյ-Էմ-Էյ» Աուդիտ» ՓԲԸ-ն հայտնել է, որ Ընկերության ներկայացրած հայտի վրա նշված է «Բնօրինակ» բառը և հանձնաժողովի արձանագրության այս մասը չի համապատասխանում իրականությանը:

«Էյ-Էմ-Էյ» Աուդիտ» ՓԲԸ-ն գտնում է, որ գնահատող հանձնաժողովը ոչ էական մանրամասներին կարևորություն տալով խախտել է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ, 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ և 3-րդ և 12-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերը:

«Էյ-Էմ-Էյ» Աուդիտ» ՓԲԸ պահանջել է նշված արձանագրությունից հանել 1-ին կետի 1-ին ենթակետի երրորդ պարբերությունում նշված պատճառաբանությունը և Ընկերության հայտը գնահատել առանց դրա ազդեցության:

Գնահատող հանձնաժողովի 2014թ. դեկտեմբերի 12-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով գնահատող հանձնաժողովը որոշել է «ԷԿԵՆԳ-ՊԸԾՁԲ-14/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգը հայտարարել չկայացած՝ ներկայացված հայտերից ոչ մեկը հրավերին չհամապատասխանելու պատճառաբանությամբ:

«Էյ-Էմ-Էյ» Աուդիտ» ՓԲԸ-ն պահանջել է, որպեսզի Հրավերով ներկայացրած Ընկերության հայտը նորից գնահատվի և որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցից ճանաչվի առաջին տեղը զբաղեցրած մասնակցից:

Այսպիսով, «Էյ Էմ Էյ» Աուդիտ» ՓԲԸ-ն բողոքարկել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2014թ. դեկտեմբերի 12-ի թիվ 2 արձանագրության 1-ին կետի 1-ին ենթակետով՝ «Էյ-Էմ-Էյ» Աուդիտ» ՓԲԸ-ի ներկայացրած հայտը հրավերին չհամապատասխանող գնահատելու, և 2-րդ կետով՝ «ԷԿԵՆԳ-ՊԸԾՁԲ-14/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգը ներկայացված հայտերից ոչ մեկը հրավերին չհամապատասխանելու պատճառաբանությամբ չկայացած հայտարարելու, կայացրած որոշումները:

«Էյ-Էմ-Էյ» Աուդիտ» ՓԲԸ-ի ներկայացուցիչը, մասնակցելով Կենտրոնում 25.12.2014թ. ժամը 16:00-ին կազմակերպված նիստին, պնդեց բողոքում նշված փաստարկներն ու պահանջները:

2. «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ն 25.12.2014թ. հայտնել է, որ Ընկերությունը բողոքը ներկայացրել է երկու հիմնական ուղղություններով: Առաջինը՝ Պատվիրատուի կողմից խտրական վերաբերմունք է ցուցաբերվել, որի արդյունքում խախտվել են բողոքում նշված իրավանորմերը և երկրորդը՝ հայտը մերժվել է ոչ էական խախտումներն արժևորելու պատճառով:

Պատվիրատուն գտնում է, որ բողոքում նշված հիմնավորումները մերժվում են գնահատող հանձնաժողովի 2014թ. դեկտեմբերի 12-ի թիվ 2 արձանագրության մեջ նշված փաստարկներով: «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ն հայտնել է, որ բողոքն անհիմն է նաև ստորև նշված պատճառաբանությամբ.

ՀՀ սահմանադրական դատարանը 2008թ. հունվարի 15-ի ՍԴՈ-723 և 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-765 որոշումներում անդրադարձել է իրավահավասարության խնդրին և, հետևելով այս կապակցությամբ եվրոպական դատարանի մի շարք որոշումներին, սահմանել է, որ վերաբերմունքի տարբերությունը խտրականություն է, եթե առկա չէ օբյեկտիվ և պատճառաբանված արդարացում:

Տվյալ պարագայում «մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը», «աշխատանքային ռեսուրսներ» և այլ որակավորման չափանիշների կապակցությամբ հրավերով սահմանվել են օբյեկտիվ և պատճառաբանված պայմաններ:

«ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ն, հանդիսանալով պետական կառավարման ոլորտում էլեկտրոնային ենթակառուցվածքների ներդրման հիմնական ընկերություն, իր ֆինանսական միջոցները ստանում է նաև մի շարք միջազային կազմակերպությունների հովանավորությամբ, որոնց համար, բնականաբար, ընդունելի է համարվում իրենց հայտնի սուբյեկտների կողմից որակավորված աուդիտորների աշխատանքը: Պատվիրատուն ոչ թե ցանկանում է նսեմացնել բողոքարկողի կողմից մատուցվելիք ծառայությունների

որակը, այլ պարզապես ցանկանում է բողոքարկման խորհրդի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, թե որքանով պահպանված կլինի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով ամրագրված արդյունավետ գնման երաշխիքը, երբ, օրինակ, համաշխարհային բանկի կամ այլ միջազգային դոնորների կողմից զուտ իրենց չափանիշներին չբավարարելու պատճառաբանությամբ կասկածի տակ կդրվեն թեկուզև օբյեկտիվ աուդիտորական եզրակացությունները: Հետևաբար՝ Պատվիրատուի կողմից հրավերում միջազգային որակավորման առնվազն 3 աուդիտորի պայմանի սահմանումն ունեցել է իր օբյեկտիվ պատճառաբանությունը և երբևէ նպատակ չի ունեցել սահմանափակել մրցակցությունը շուկայում: Ընդհակառակը, այդ պայմանով պատվիրատուն նպատակ է հետապնդել միջազգային դոնորների և այլ անձանց շրջանակում առավելագույնս արդյունավետ օգտագործել իր գնումը:

Ավելին, պատվիրատուի գործունեությունն իր բնույթով հանդիսանում է յուրահատուկ և այդ պատճառով էլ գնման առարկա է սահմանվել ոչ թե ընդհանրապես աուդիտորական ծառայությունները, այլ կոնկրետ «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ին աուդիտորական ծառայությունների մատուցումը, իսկ դրան համանման է համարվել կապի ոլորտում նմանատիպ ծառայությունների մատուցումը: Այս պայմանի սահմանումը նույնպես ունեցել է իր տրամաբանությունը:

Մասնավորապես, պատվիրատուի օտարերկրյա գործընկերները (էլեկտրոնային ստորագրության և այլ նախագծերով) հանդիսանում են կապի ոլորտում հանրահայտ կազմակերպություններ և նրանց Պատվիրատուի հետ համագործակցության պայման է հանդիսանում նաև համապատասխան աուդիտորական եզրակացությունների առկայությունը: Ընդ որում, այնպիսի աուդիտորական եզրակացությունների առկայությունը, որն այդ կազմակերպություններին հավատ է ներշնչում, որ այն իրականացրել են էլեկտրոնային կառավարման ոլորտին բանիմաց աուդիտորական կազմակերպություններ: Տվյալ պարագայում բողոքարկողի կողմից ներկայացվել է էլեկտրոնային կառավարման ոլորտից միանգամայն տարբերվող ոլորտում գործունեություն ծավալող ընկերության աուդիտի իրականացման ապացույց: Հետևաբար՝ ակնհայտ է, որ օտարերկրյա կազմակերպությունների հետ առողջ մրցակցության պայմաններում, երբ ԷԿԵՆԳ-ի կողմից ներկայացվի, որ իրեն աուդիտի է ենթարկել ընդամենը 1 միջազգային որակավորում ունեցող և անտառային գործունեություն իրականացնող ընկերու-

թյան աուդիտի փորձ ունեցող կազմակերպություն, Ընկերությունը ակնհայտորեն այդ մասով իր դիրքերը կզիջի շուկայում:

Ինչ վերաբերում է բողոքարկողի այն դիրքորոշմանը, որ երկրորդ հիմքով զուտ ձևական պատճառներով է մերժվել իր հայտը, ապա այն ևս անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

Կարգի 111-րդ կետի համաձայն՝ պարզեցված ընթացակարգով գնում կատարելու դեպքում կիրառվում են Օրենքի 27-37-րդ հոդվածներով նախատեսված պայմանները՝ հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները՝

1)...

5) հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված՝

գ. որակավորման հատկանիշների մասին տվյալները (փաստաթղթերը)՝ մեկ բնօրինակ և հրավերով նախատեսված թվով պատճեններ...»:

Վերը նշված նորմից բխում է, որ արդեն իսկ նորմատիվ իրավական ակտով մասնակիցների համար պարտադիր պահանջ է նախատեսված որակավորման հատկանիշները վկայող փաստաթղթերը ներկայացնել բնօրինակով՝ անկախ պատվիրատուի կողմից նմանատիպ պահանջ սահմանելու հանգամանքի: Այս կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. օգոստոսի 16-ի թիվ 3 պարզաբանմամբ սահմանվել է, որ Կարգի 111-րդ կետով սահմանված առանձնահատկությունների համաձայն՝ տվյալ դեպքում հայտով ի սկզբանե ներկայացվում են ոչ թե հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին մասնակցի հայտարարությունը (ինչպես դա սահմանված է Օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով), այլ հենց Կարգի 111-րդ կետի 5-րդ ենթակետի «գ» կետով պահանջվող որակավորման հատկանիշների մասին մասնակցի կողմից հաստատված տվյալները (փաստաթղթերը), ընդ որում, պահանջի համաձայն՝ ներկայացվում է վերոնշյալ փաստաթղթերի մեկ բնօրինակը և հրավերով նախատեսված թվով պատճենները: Իսկ դա իր հերթին նշանակում է, որ պարզեցված ընթացակարգի դեպքում մասնակիցն ի սկզբանե հայտով ներկայացնում է հրավերով սահմանված որակավորման հատկանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, որոնք էլ հենց հիմք են ընդունվում հանձնաժողովի կողմից հայտերի գնահատման ժամանակ: Այսինքն՝ պարզեցված ընթացակարգի կիրառման ժամանակ

բոլոր մասնակիցների կողմից ի սկզբանե հայտերով ներկայացվում են հրավերով սահմանված որակավորման հատկանիշներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, որոնց գնահատումը իրականացվում է մեկ փուլով:

Տվյալ պարագայում «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի կողմից որակավորման հատկանիշների մասին փաստաթղթերը չեն ներկայացվել բնօրինակով, այլ ներկայացվել են պատճեններով կնքված ընկերության կնիքով, որը ոչ մի դեպքում չի կարող հանդիսանալ պատճենի պատշաճ վավերացում, քանի որ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ գլխով հստակ սահմանվում է փաստաթղթերի պատճենների կամ դրանց քաղվածքների իսկությունը հավաստելու միակ կարգը (նոտարական վավերացում): Եվ փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար «բնօրինակ» և «պատճեն» բառերը գրելը, ոչ թե զուտ ձևական, այլ օրենքի պահանջն է, որը նպատակ ունի ապահովելու ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. օգոստոսի 16-ի թիվ 3 պարզաբանմամբ առաջ քաշված խնդիրների լուծումը:

«Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ն խնդրել է ամբողջությամբ մերժել «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի բողոքը:

Պատվիրատուի ներկայացուցիչը, մասնակցելով Կենտրոնում 25.12.2014թ. ժամը 16:00-ին կազմակերպված նիստին, այնպես 25.12.2014թ. գրությամբ Կենտրոնին ներկայացված առարկությունները և խնդրեց բողոքն ամբողջությամբ մերժել՝ այն անհիմն լինելու պատճառաբանությամբ:

3. ԳԲԽ-46/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի 20.12.2014թ. ներկայացրած բողոքը, «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի 25.12.2014թ. գրությունը և կից փաստաթղթերը, «Էյ-Էմ-Էյչ Աուդիտ» ՓԲԸ-ի ներկայացրած հայտը, «ԷԿԵՆԳ-ՊԸԾՁԲ-14/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2014թ. դեկտեմբերի 12-ի թիվ 2 արձանագրությունը, հայտնում է հետևյալը.

ԳԲԽ-46/14 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԷԿԵՆԳ-ՊԸԾՁԲ-14/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Էյ-Էմ-ԷյՆ Աուդիտ» և «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲ ընկերությունները:

2. Հրավերի 1-ին մասի 2.3 կետով սահմանվել են հետևյալ պահանջները.

«Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.2), որ հայտը ներկայացնելու օրվան նախորդող տաս տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն քսան պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում կատարվող գնումների ծավալի ոչ պակաս, քան հիսուն տոկոսից: Նմանատիպ են համարվում կապի, հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի անցկացումը:

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

«Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է նույն պարբերությամբ նախատեսված պահանջները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջներն են՝

- առնվազն 3 միջազգային (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, Սի-Փի-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) որակավորված (ներառյալ ասոցացված) և 3 Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող աուդիտորներ, որոնք պետք է ունենան նմանատիպ աշխատանքների իրականացման ոչ պակաս 5 տարվա փորձ, ինչպես նաև աուդիտի աշխատանքներին մասնակցող խմբի ղեկավար աուդիտի որակավորման լիցենզիայի առկայությամբ, որն ունի նմանատիպ աշխատանքների ղեկավարման առնվազն 10 տարվա փորձ:

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում մասնակցի հայտը մերժվում է:

3. «Էյ-Էմ-Էյ» Աուդիտ» ՓԲԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտով որպես «մասնագիտական փորձառության» և «աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշ ներկայացրել է անտառային գործունեություն ծավալող ընկերության հետ կնքված աուդիտի իրականացման պայմանագիր և մեկ միջազգային որակավորում ունեցող աուդիտի փորձ ունեցող որակավորված աուդիտոր:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2014թ. դեկտեմբերի 12-ին ժամը 15:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն «Էյ-Էմ-Էյ» Աուդիտ» ՓԲԸ-ի հայտը մերժվել է՝ Հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու պատճառաբանությամբ (տես՝ սույն եզր. էջ 2, 5, 6):

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2014թ. դեկտեմբերի 12-ի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշմամբ «ԷԿԵՆԳ-ՊԸԾՁԲ-14/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգը հայտարարվել է չկայացած՝ ներկայացված հայտերից ոչ մեկը հրավերի պայմաններին չհամապատասխանելու պատճառաբանությամբ:

4. ԳԲԽ-46/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.

1. Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքի վրա:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Կարգի 81-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության, նույն կետի 2-րդ և 3-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե՝ դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

2) առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի (կամ պայմանագրերի) կողմերի հաստատած՝ պայմանագրի (կամ պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի (կամ պայմանագրերի) կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

3) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 85-րդ կետի համաձայն՝ գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են գնման կամ նախաորակավորման հայտարարությամբ կամ հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

Ելնելով վերոնշյալ իրավական նորմերի բովանդակությունից՝ գտնում ենք, որ Հրավերի 1-ին մասի 2.3 կետով սահմանված՝ «մասնակցի «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը գնահատելու նպատակով նախատեսված և հայտը ներկայացնելու օրվան նախորդող տաս տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն քսան պայմանագիր ներկայացնելու» և «Նմանատիպ են համարվում կապի, հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական գործունեության աուդիտի անցկացումը» պահանջները հակասում են Կարգի 81-րդ կետի 1-ին ենթակետով և 85-րդ կետով սահմանված պահանջներին, որով խախտվում է նաև Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված գնման գործընթացի մրցակցային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման սկզբունքը:

Բացի այդ, Պատվիրատուի կողմից որևէ ապացույց չի ներկայացվել, որով կհավաստվեր, որ վերջինիս և օտարերկրյա գործընկերների՝ համաշխարհային բանկի կամ այլ միջազգային դոնորների հետ համագործակցության պայման է հանդիսանում այնպիսի աուդիտորական եզրակացության առկայությունը, որը իրականացվել է կապի, հեռահաղորդակցության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում հաշվապահական հաշվառման և ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ անցկացնելու փորձ ունեցող աուդիտորական կազմակերպության կողմից:

2. Կարգի 30-րդ կետի 1-ին ենթակետի «բ» կետի 2-րդ պարբերության համաձայն՝ եթե պատասխանատու ստորաբաժանում սահմանելու ակտով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնումների պլանը հաստատվելու օրվան հաջորդող տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը հաստատում է գնման հայտը, որը ներառում է շինարարական աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշի մասով մասնակցին ներկայացվող պահանջները՝ ներառյալ դրանց հիմնավորման նպատակով մասնակիցներից պահանջող փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը: Աշխատակազմի նվազագույն քանակին, պահանջվող որակավորմանը, աշխատանքային փորձին (տարիների նվազագույն քանակ, գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը) ներկայացվող պահանջները սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության:

Վերոնշյալ իրավական նորմի բովանդակությունից հետևում է, որ Հրավերի 1-ին մասի 2.3 կետով սահմանված «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատելու նպատակով նախատեսված «առնվազն 3 միջազգային (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, ՍԻ-ՓԻ-Էյ, ՍԻ-Այ-Էս-Էյ) որակավորված (ներառյալ ասոցացված) և 3 Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում ունեցող աուդիտորներ, որոնք պետք է ունենան նմանատիպ աշխատանքների իրականացման ոչ պակաս 5 տարվա փորձ...» պահանջները հակասում են Կարգի 30-րդ կետի 1-ին ենթակետի «բ» կետի վերոնշյալ պարբերությամբ սահմանված պահանջին, քանի որ նշված պարբերության համաձայն՝ «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում է միայն շինարարական աշխատանքների և խորհրդատվական ծառայությունների գնման դեպքում:

Բացի այդ, Պատվիրատուի կողմից որևէ ապացույց չի ներկայացվել, որով կհավաստվեր, որ վերջինիս և օտարերկրյա գործընկերների՝ համաշխարհային բանկի կամ այլ միջազգային դոնորների հետ համագործակցության պայման է հանդիսանում Հրավերով սահմանված «Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման նման չափանիշների առկայությունը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի կողմից աուդիտորական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԷԿԵՆԳ-ՊԸԾՁԲ-14/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը հակասում է Կարգի 30-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության 2-րդ մասով, 81-րդ կետի 1-ին ենթակետով և 85-րդ կետով սահմանված պահանջներին, որպիսի հիմքով Ընթացակարգը հայտարարելու մասին գնահատող հանձնաժողովի որոշումը ենթակա է դադարեցման: Սակայն նկատի ունենալով, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2014թ. դեկտեմբերի 12-ի թիվ 2 արձանագրության 2-րդ կետով արդեն իսկ որոշում է կայացվել «ԷԿԵՆԳ-ՊԸԾՁԲ-14/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին, ուստի առաջարկում ենք «Էյ-Էմ-Էյ» Աուդիտ» ՓԲԸ-ի 20.12.2014թ. ներկայացրած բողոքը մերժել:


«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման
բաժնի վարիչ՝



Դ. Դավթյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-46/14 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ռ. Մկրտչյան